


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրբ 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԻ

20
ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրբ 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԻ

20
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը: Մա-
նուցման տոյր 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիս:
2 հրատարակուած գրութիւնը եւ յարմիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

5-6-11-36

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

Շումլաէն և Տօպրիչէն խմբագրու-
թեանս հասած նամակներ կիմացեն
նոյն տեղերու ազգական վարժարանայ
բարւօք և կանոնաւոր ընթացքը, շնոր-
հիւ ուսուցչուհիներու անխոնջ և յարա-
տե աշխատութեանց, որոնք կրցած են
քիչ ատենուան մէջ իրենց յանձնուած
վարժարանները բարեկարգ վիճակի մը
մէջ դնել:

Նամակագիրք փափագ կը յայտեն
որ Օր. Արաքսի Իզմիրլեան և Օր. Նեվ-
րիկ Տաճատեան (Ա. ք Շումլա և Բ. ք Տօպ-
րիչ) իբր խղճամիտ ուսուցչուհիներ և
գիտակից իրենց պաշտօնին, պիտի ջա-
նան այսպէս յարատեւ մինչև վերջը,
լիովին պսակելու համար տեղացիներուն
յոյսերը, պատրաստելով պարկեշտ և ուս-
եալ աղջիկներ, որոնց պէտքը այնքան
զգալի է մեր մէջ: Անշուշտ Շումլացիք
և Տօպրիչցիք ալ փոխադարձաբար պի-
տի ջանան իրենց կողմէ հարկ եղածը չի

զլանալ, յարատեւ բարգաւաճ պահելու
համար վարժարաններն ի բարւօք կըր-
թութիւն իրենց մատակ աղջկանց և
ի պատիւ իրենց դպրութիւն կրթասի-
րութեանը:

Հիմա հայ աղջկանց բարւօք կըր-
թութիւնը առաւել քան երբէք աւելի
զգալի եղած ըլլալով մեր մէջ, շի ինչ-
պէս վճռած է նշանաւոր իմաստասէր մը,
թէ «Տղայ մը կրթելը անձ մը կրթել
ըսել է, իսկ աղջիկ մը կրթելը ամբողջ
ընտանիք մը» կը մաղթենք որ ուրիշ
տեղերու աղջկանց վարժարանք ալ ջա-
նան նմանիլ իրենց քոյր վարժարա-
նաց ընթացքին:

ՆՈՐ ԱՂԱՆԴ ՄԸ

Շատ հետաքրքրական երևոյթ մը
պատահեր է այս օրերս Կովկասի հայ
գիւղերէն մէկուն մէջ: Նոյն գիւղի հայ
Ժողովուրդը, ինչպէս հաստատօրէն կը
պատմեն, ամբողջութեամբ կրօնափոխ
եղեր է և ընդունել է Ռուսական ա-
ղանդ մը, որ շատ քիչ ծանօթ է: Այ

աղանդաւորները կը կոչուին ռուսերէն փրիկուճի, որ կը նշանակէ ցաւկողներ: Աղանդը կը պահանջէ որ, աղօթողներն անպատճառ անդադար ցատկէն կամ կաքաւեն աղօթելու ժամանակ, ինչպէս ըսուած է եղեր Աստուածաշունչի մէջ տեղ մը: Հայ գիւղացիք իրենց դրացի Ռուս աղանդաւորներու ազդեցութեան տակ հետեւեր են անոնց:

Վառնայի Հայ «Աղջկանց Կրթարան»ի տընօրէնութեան կողմէ խմբագրութեանս ղըրկուած հրաւիրագրէ մը կը տեղեկանանք թէ վարժարանին Ա. տարեշրջանի բնութիւնները պիտի սկսին յառաջիկայ երկուշաբթի, Յունիս 15, ամեն առաւօտ ժամը 9—12 և պիտի վերջանան հինգշաբթի, Յունիս 25:

Պաթումէն կը գրին թէ Պ. Աղեք. սանդր Մանթաշեանց՝ իր քարիւղիի մթերանոցները Անգղիացիներու վաճառելու ունեցած գաղափարէն հրաժարելով, ըստ առաջնոյն ինք պիտի շահագործէ եղեր զանոնք:

ԸՆԿՈՒԶԻ ԽՈՇՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԿՈՒՑ

Տոպրիչէն կը գրեն.

«Յունիս 5 ուրբաթ իրիկուն ժամը 3ին (ը. և) սաստիկ փոթորիկ մը սկսաւ և ընկուղի խոշորութեամբ կարկուտ տեղաց, զոր 35 կըռամ կշռեցինք. այս պատճառաւ անթիւ ապակիներ, ջարդուբուրդ եղան և տօնավաճառի խանութպանք ալ բաւական փնտռեցան. Թէն թէները ծակեցան. սէրկիճիները յանկարծակիի գալով աւրանքնին ձգեցին ու փախան. Քիմնանճիներու ապրանքները կտորեցան: Կըսուի թէ պարտեղներու մեծ փնտս հասուցած է:

Հետեւեալը ղըրկուած է մեզ ի հրատարակութիւն.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ ժողովուրդ,

«Հարժուճ»ի հետ ունեցած գաղտնի մանրամասնութիւնը արդէն յայտնի է: Գիտես,

նաև որ գրողներու ազատութիւնը չի կաշկանդելու համար օրինաց սահմանած թոյլտուութենէն օգուտ քաղելով, Գամբր—Արշաւիր և Հաւարշ ըստած անձինք չը գիտինք ինչպիսի անխիղճ մարմաջով մը զիստեւացրելու անճարակ փորձին մէջ իրենց թերթին պատասխանատուն Տիար Թահմիզեանը փրկելու համար եղած առաջարկները չէին ընդունած, ինչպէս բացատրած եմ «Տաւրոս»ի վերջին թիւերէն մէկուն մէջ:

Ընդհանուր դատաստացի կողմէ այս անգամ պէտք եղած ազգագիրը Տիար Թահմիզեանի հասած ատեն, բնականաբար այս վերջինը տագնապած և իր միակ բարեկամին Տիար Թօփալեանի միջոցաւ ինծի դիմած ու խնդրած է որ ձգեմ իր օձիքը և բուն դերաստարներուն հետ չափուիմ:

Ինչպէս առաջ, նոյնպէս և այս անգամ շատ սիրով կընդունիմ Տ. Թօփալեանի այս առաջարկը, պայմանաւ որ ատենց օձիքը իմ ձեռքը տայ այն միակ միջոցաւ, որ կայ օրինաց մէջ, այսինքն այդ պարոններ գրեն ինծի նամակ մը և ինչ որ ըսած են Հարժուճի մէջ, նոյնը կրկնեն, յայտարարելով իրենց իսկական ստորագրութեան ներքեւ թէ ես կեանքիս մէջ դաւաճան կամ մատնիչ եղած եմ և իմ գրութիւններն ալ ազգադաւ:

Տիար Թօփալեան բանաւոր գտնելով մեր այս առաջարկը, կը խոստանայ բերել ուղած թուղթերնիս ու կերթայ բանակցելու իրենց հետ:

Օրեր կ'անցնին առանց կլբի և Տ. Թօփալեան արդար զայրոյթով լեցուած կուգայ մեզ յայտարարելու թէ ՓԱՆՈՒՍՏ կուտան այդպիսի թուղթ մը տալէ, որ ի հարկէ նըկուղի մը առաջնորդը պիտի ըլլար իրենց համար:

Խոստացեր էին Տ. Թահմիզեանը ազատելու համար ինչ որ ալ ըլլայ՝ ստորագրել ուղուած թուղթը, վճռական պահուն կը մոռնան իրենց այդ ամեն խոստում և իրենք զիրենք կը դնեն շատ արգահատելի կացութեան մը մէջ, զոր Հրանդ և Վրոյր աղէկ ձշրեցին բառով մը. — Անազնուութիւն:

Իսկ Դու ժողովուրդ, դու որ գերա-

գոյն դատաւոր մ'ես, կտրոյ ես այդ բառի վրայ աւելցնել դեռ շատ մը բառեր, որոնք իսկապէս որակեն այս կարգի թղուկներու բարոյական վիճակը:

98 Գունիս 12

Տ. ԽԳՆԱԼՈՐԵԱՆ

Վառնա

ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալ հինգշաբթի օրը Հոթէլ Տունավի մէջ «Խրաւունք»ի յարգելի խմբագրապետին և «Շարժում»ի պարտնետուն մէջ հետեւեալ խօսակցութիւնը տեղի կ'ունենայ:

— Ինչ ըսել կ'ուզէք, բարեկամներ, ո՞վ կ'ակնարկէք դուք պնակալէզ մէկ քանի թերթեր, ըսելով:

— Ներողութիւն, մենք ձեզի համար չենք գրած:

— Բայց չէ՞ որ մենք ալ Պ. Ամիրխանեանցի նամակին առթիւ գրած էինք:

— Օհ, մենք չէինք կարծեր որ դուք ձեր վրայ պիտի առնէք և կամ ժողովուրդը «Խրաւունք»ի մասին ալ տանկ բան մը մտքէն պիտի անցնէ: Մենք անմիջապէս կը հերքենք ձեզի համար, մեր խօսքը «Հայելի»ին և Տաւրոսին համար էր:

— Սակայն Հայելիին մէջ ալ յեղափոխականի դէմ գրուած մը չի կարայն առթիւ:

— Ի՞նչ և չի կարգացինք, բայց ապահով ենք որ գրած է:

— Չէ եղբայր, աստանկ բան չի կար, ես հիմա կրկին կարգացի «Հայելի»ին:

— Անանկ է նէ գոնե «Տաւրոս» անպայման գրած պիտի ըլլայ:

Բայց Տաւրոսի մէջ ալ յեղափոխականի դէմ նոյն առթիւով ակնարկութիւն չէր եղած:

Այս պարագան ալ երբ կը պարզուի, «Շարժում»ի երկու **ՄԵՆԾ** խմբագիրները ապուշ և ակնապիշ իրարու երես կը նային:

Մենք զարմանքով կը պաշարուինք, տեսնելով որ մեր ինքնակոչ խմբագիր-

ները թերթեր կը դատեն ու կը քննադատեն, առանց իսկ զանոնք կարգացած ըլլալու, մարդեր կը զրպարտեն ու կը մշտտեն, առանց երբէք մտածելու թէ օր մը իրենց խօսածներուն ու գրածներուն համար հաշիւ կը պահանջուի իրենցմէ, հաշիւ մը, որ չի կենցուցիչ ամօթահարութեամբ ծակէ ծակ կը փախցնէ զիրենք:

Բարոյական այսքան անկում...

Բոժոժիկ. — Ես՝ ամենեւին չեմ զարմանար, արդէն իսկ դիտնալով որ այդ մարդիկը գրչի տեղ բրիչ, խօսքի տեղ հայհոյութիւն գործածել միայն սորված են: «Այսը չէ՞ որ արդարեւ, չուտաւ իր» սալլանը (չարժում կընէ):

ՊՆԱԿԱՆԵՉԸ

Մէկ քանի ամիսներ առաջ պարոն մը կ'Պոլսոյ հայաթերթի մը միջոցաւ ծանօթ Տօգթէօրի մը համար «Անգուլթ, անորակիկ, Պոլսոյ մէջ իր ունեցած աննշան դիրքին վերէժը լուծելու համար չափազանց պահանջկոտ, գաղթականներու երեսէն իր բեռը կապողոյի ածականները տուած էր, որուն պատճառը՝ իր մէկ մօտաւոր աղգականը ձրիաբար դարմանած չըլլալն էր. սակայն այսօր նոյն պարոնը ուրիշ թերթի մը միջոցաւ միևնոյն սոգթէօրը կը դրուատէ, ի ձայն փողոյ և սրնդի անոր մասնագիտական ճարտարութիւնը կը հոգակէ և ջերմ շնորհակալութիւն կը յայտնէ իր մէկ պաշտօնեային վրան եկած մի թերթի ջղային տկարութիւնը մէկ անգամէն դարմանած ըլլալուն համար, հաւանականաբար առանց այցելագին առնելու: Հիմա կը հարցուի թէ ինչ անուն տալու է այդ պարոնին:

— Պնակալէզ:

Բոժ. — Ահանջը խօսի խելքով կարճ, գլխով ու գլխարկով ՄԵՆԾ յօդուածագիրն, որ մէկէ աւելի կեղծ ստորագրութիւններ կը գործածէ, ու երբ նեղը մնայ՝ «Իմ ստորագրութիւնս ցուցուցէք», կը պոռայ:

ԾԱՆՕԹ ԴԵՄՔԵՐ



Ա.

ՊԱՏՐԱՍՏ ՈՒՏՈՂ ՔԱՂԱՔԱԳԷՏԸ

Թուխ, միջահասակ, դեմքին վրայ հը-
պարտութեան և արուեստակեալ լրջութեան
բոնազրօսիկ ժպիտներով օժտեալ պարոն մ'է,
որուն մէկ ձեռքը գաւաղան իսկ միւսը ան-
պատճառ եւրոպական թերթ մը կամ հան-
դէս մը պիտի գտնուի:

Բան մը կորսնցնող մարդու մը պէս ա-
ծապարանօք կը քալէ փողոցին մէջ, ձեռքի
նամակին բաց պահարանը թուքոտելով ըղ-
բաղած, առանց ուշադրութիւն ընելու դէմը
ելնողին, որուն պիտի զարնուի անպատճառ:
Զինքը տեսնողը կը կարծէ թէ կարեւոր հը-
րամաններ տալու կերթայ սակարանին, բայց
երբ անոր քայլերուն հետեի՝ պիտի տեսնէ
թէ այդ հրամանները կուտայ միմիայն . . .
պագալնիցի աշկերտին:

Անհանգարտ, իր վրայ խօսող, իր վը-
րայ մեծ համարում ունեցող այս պարոնը,
առանց բան մը հասկցած ըլլալով՝ ժամերով
կը խօսի օրուան քաղաքականութեան վրայ.
Երկրագործական գիտելիքներու, ծաղկեմշա-
կութեան վրայ եայլն, եայլն, եայլն: Իրմէ
զատ ձեռնհաս տնտեսութեան մը չի կայ
որ գիտնայ պարապ տեսութիւններ ընել
Սպանո—Ամերիկեան պատերազմին վրայ.
ժահագու թշնամի է ամերիկաի իսկ պաշտող
մը Սէրվէրա ծովակալի և Սպանիաի: Տա-
ղանդաւոր քաղաքագետնիս ամենեւին չի նե-
րեր որ մէկը իր խօսած ատենը ընդմիջելու
կամ «ատանկ չէր, ասանկ էր» ըսելու յան-
դգնի. անմիջապէս կը բարկանայ, դէմքին
պէս աչքին ճերմակներն ալ կը կարմրին,
դողալէն խօսքը կը կորսնցնէ, և վերջ'ի վեր-
ջոյ «գուք չէք կրնար ինծի պէս հասկնալ,
ասոնք նուրբ քաղաքագիտութիւններ են, ձեր
խելքէն վեր բաներ են» կը պոռայ:

Կը խոստովանի թէ ահագին բօրէսքօն-

տաններ ունի արտասահմանի հետ . . . ե-
րաղին մէջ. թէ կարող է ուղածին չափ ապ-
րանքներ բերիլ տալ Եւրոպայէն . . . պա-
րապ հակերով, թէ վերջապէս, շուկայի մարդ
է, թէ և 'ի ծննդնէ Ս. Աւագանին շուկային
ճամբան չէ գիացած: Իր վարկը այն աստի-
ճան բարձրացած է որ, ամեն օր, եւրոպա-
կան գործարանները՝ առանց փոխարժէքը
ստանալու իւրաքանչիւր կը խրկեն եղբ
իր հասցէին. . . ձրիաբար: Աղնուաշուք պա-
րոնը ամեն օր կ'անոնաորապէս ընթերցարան
երթալով՝ նստելիք ամթոռին վրայի փոշիները
շունչովը աւելիէ տոբը՝ հոն եկած թերթերը
կուշտ ու կուռ կը կարգայ ինչպէս նաեւ տե-
ղական հայաթերթերը . . . անկուտիաբար,
և անոնցմէ առած պաշտօնը կը բերէ սրճա-
րանը իր բարեկամներուն կը հրամցունէ ա-
նանկ սահուն լեզուով մը, որ ունկնդիրք ա-
նոր շրթունքներէն վար կ'ախուսած կը մնան
բերանին բաց:

Իրիկուան ժամը ճին, մեծաբանճար
քաղաքագետը ոտքը ոտքին վրայ դրած սըր-
ճարանին առջևը կը սպասէ բութահին ու երբ
ցրուիչը իր հասցէին ծրար կամ նամակ մը
բերէ՝ յոխորտալով ասգին անդին յաղթա-
կան ակնարկներ կը նետէ, աչքին ծայրովը
ոլորուն պետին ճութին վրայ նայելով կը խըն-
դայ, և իր մօտ գտնուող բարեկամին ցուց-
նելով հասցէն՝ կըսէ. — Տեսէք, որչափ ծա-
նօթ եմ՝ քաղբիս, որ նամակիս վրայ առանց
բնակած թաղս ու տանս թիւը գրուած ըլ-
լալու, նամակաբաշխը կը գտնէ կոր զիս: Դի
մեծի գործողութիւն, կամ, խօսողութիւն,

Հիմա կը ստիպէ բեղի որ կարգաս, ու
երբ սկսիս ծրարը քակելու, պարոնը կը շրտ-
կուի, աչուրները տարապայման կերպով կը
բացուին ու կը դոցուին, դէմքին վրայ ան-
ճառ երանութիւն մը կը նկարուի, ձեռուը-
ները ուժով ուժով շիւղ կը սկսի, ալ բովը
մի՛ կենար, ուրախութիւնը ու հպարտութիւնը
չափ ու սահման չունին:

Իր կարգացած միջոցին չըլլայ որ բան
մը հարցնես. կրակոտ նայուածք մը կ'ուղղէ

քեզի, ու երեսդ 'ի վեր կուտուծեամբ կը պոռայ—“ Գաղափար չունիմ ” : Եթէ չի փախչիս ու յամառիս՝ ինչ որ կայ հոն բովը, գաւազան, կրակարան, սուրճի կամ ջուրի գաւաթ, եայլն գլխուդ իջնցնելու կը ըստառնայ :

Եզրակացութիւն. — Ա՛ռգե՛ս պարոնին նմանիլ ու համայնագետ երեւիլ. պէտք է քիչ մը գաղիերէն գիտնաս ու հայերէն խօսակցութիւնդ համեմատ ֆրանսերէն խեցբեկ ու թափթփուք բառերով : X

ՈՒԹԻԿԷՆԵԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ԿԱԼԷՍԻ ԻՇԽԱՆԸ

Ահա Անգլիոյ գահաժառանգին լուսանկարը՝ X ճառագայթներով տոնուած :

Բարձրութիւն 5¹/₂ ոտք, ծանրութիւն 150 լիպրա : Բաց կապոյտ աչքեր, ճերմակաւոր մօրուք և խոշոր գլուխ : Ոտքերը և ձեռքերը փոքր ու ձեւաւոր : Յիսուներեօթ տաւրու եւ չորս թռուած տէր : Սիրած գինին է 1889ի շամբանեան եւ քառասուն տարուան հին քոնեաք մը : Ամեն ազգերը կը սիրէ մանաւանդ հարուստ ազգերը : Անգլիոյ ամենէն ճարտար որսորդը եւ ամենէն լաւ ձի նըստողն է : Աշխարհիս մէջ ամենէն շատ ճառ խօսող մարդը եղած է, բայց միշտ կարճ ճառեր : Սուլթանին հետ սեղանակից գտնուող առաջին քրիստոնեան եղած է : Տարին հազար ոսկի կը վատնէ հեռագիրներու համար : Օրը 200 նամակ կստանայ որոնց շատերուն կը պատասխանէ. Եւրոպիոյ ամեն պատուանշանները կուրծքին վրայ կը փայլին : Համագրեւանները 355,000 ֆրանքի արժողութիւն ունին : Ամիրալ միեւնոյն տոնէ Մարեշալ է : Ամեն կիրակի առտու եկեղեցի կերթայ : Հաճոյքները փարիզի մէջ կը փնտռէ, ուր ընդհանրապէս դերասանուհիներու քանցքներուն շուրջը կը դառնայ : Ար խօսի անգլիերէն. ֆրանսերէն, իտալերէն եւ ռուսերէն : Սպան-

նութեան փորձ մը երբէք՝ չէ եղած իր վրայ : Ախուներուն համար տարին 30,000 ոսկի կը ծախսէ :

Ծնած օրը 2,500,000 ֆրանք եկամուտի տէր էր : Արսէ թէ պարտք չունի : Անձնական քարտուղարով մը եւ երկու օգնական գրագիրներով կը բաւականանայ :

Ամեն օր կռիւ կընէ կնոջը հետ, բայց զաւակներուն վրայ կը խնայենայ : Էրիկ մարդոց մօտան՝ Կալլէսի իշըանին հագած հագասաններէն կախում ունի : Սուէդի չրանցքին բացման ներկայ գտնուած է : Օր մը տակայն, իր ժամացոյցը 2 շիլինի համար գըրաւի դնելու հարկին մէջ գտնուեցաւ : Թարգմ.

ՎԵՀԱՊԵՏՆԵՐՈՒ ԾԱՆՌՈՒԹԻՒՆԸ

Ով որ Պափիէրայի Բիսինկէն քաղաքը գացած է, անշուշտ գիտէ թէ սուլթանութիւն մը կայ որ ամեն հոն գացող հիւանդները դարմանուելէն առաջ և ետքը, անպատճառ մէյ մը կը կշռեն :

Տարիներով շարունակ թերթերը Պիլմարքի ծանրութեան քանակութիւնը կը ծառցանէին :

Այժմ այդ քաղաքէն կիմացնեն թէ անցեալ տարի Աստորիոյ կայսրուհին 41 քիլօ կը կշռէ եղեր : Մէկ տարուան մէջ էլիզապէթ կայսրուհին 4 քիլօ վրայ դըրած է :

Անցեալ ձմեռ Անգլիոյ թագուհին Նիսի մէջ 78 քիլօ կը կշռէր և Սպանիոյ թագուհին 67 :

Սպանիոյ նախկին Իզապէլ թագուհին Աստորիոյ կայսրուհւոյն կրկինը կը կշռէ, այսինքն 82 քիլօ :

Ահա արքայական գերութիւն մը :

 ԱՉԴ. — Ինքզինքը Եւրոպական բազմաթիւ առևտրական տուններու իբր ներկայացուցիչ կլլեցնելու աշխատող կայան պարոն մը, իր մեկնելուն առթիւ, երկու երկար տարիներ գործածած ռէքլապլիֆ գլխարկը ծախու հանած է : Հնութիւններու սիրահար եղողներուն կազդարարուի առիթէն օգտուիլ

եւ գնել այդ վար—եւ մէջ պարոնին գլխարկը, զոր 2 ֆր. 35 սանդիմի տուած՝ հիմա 1 ֆր. 50 սանդիմի վաճառելու համար զայն կազանդի սիմիթի պէս խօլթուիւր զարկած՝ խանութ խանութ անդաստան կը պտտի:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս Բոթոթիկ և Ընկ.)

Տօպրիշ

Գարմագարը խուժքին պետը Պագալ-նիցան ունեցած պարտքը չի վճարած առնել բարելու վրայ էր, բայց օծիքը ձեռք տուաւ և իբր աւանդ վար զրուեցաւ:

Ռուսճուգ

«Տեղւոյս Ընթերցարանին մէջ վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ մի քանի երիտասարդներու և վանական տիւրացուի մը միջև, այս վերջինը երբ սկսաւ ամիզցիեղ եւ անիմաստ խօսքեր ըսել ու նիւթէն շնչիլ, ընդդիմախօսներէն մին իրեն ըսաւ. — Պարոն, խօսքերուդ մէջ բնաւ տրամաբանութիւն չի կայ — Առ այս հսկայ վանականը զայրացած ոտք ելաւ պատասխանեց.

— Այո՛, ճշմարիտ է, թէ եւ խօսքերուս մէջ տրամաբանութիւն չի կայ, բայց ես կը խօսիմ Ֆիլօզօֆիքսն:


Այս դարավերջի բանաձեւը բուն ծափահարութեան եւ քահնապետութեան արժանացաւ, նաեւ ապուշ քմծիծաղ մը երեւցաւ ըսողին շրթունքներուն վրայ՝ ցոյց տալով իր մանրիկ ակռաները, եւ որուն գէմքը կը նրմանէր նոր խաշուած ապրիլեան նազաւոր գառան մը վտիտ գէմքին:

Երեսն թէ յիշեալ հսկայապատիւ կէս վարդապետ վարժապետը վերջերս հերոսաբար կռուած ու մեծ յաղթանակ տարած է Յունիսեան մուկներուն դէմ:

ԾԻԾԱՂ

Բոթոթիկ. — Այս այն հերոսն է, որ ասկէ առաջ Ռուսճուգէն մէկ ժամ հեռաւորութեամբ գորշ անուն գիւղը գացած էր տապանակ ուխտով, կարծելով որ դժուարա-

բուժելի ախտացեալները վայրկենաբար բուժելով պրոպատիկէ աւազանը հոն կը գրտնուի:



ԻՈՐ ՏՈՒՐԻՔ ՄԸ

Կ. Պոլսոյ Ազգ. հիւանդանոցի խընամակալ վարչութիւնը, նոյն հաստատութեան 'ի նպատակ հրապարակ հանուած սիլառի թուղթին տեսակին առաջնութեանը պատճառաւ օր օրի առնոր հատոյթին քիչնալուն առաջը առնելու միջոցը խորհելու տեղ, այս անգամ օժանդակ դանձանակներ շինել է, որոնք հայ տուներու մէջ պիտի կախուին ու տանաէր մը իրեն այցելութեան եկողներուն ներկայացնելով զանոնք, «Յիշեալ լիջիք առաջի դանձանակի» պիտի ըսէ եղեր ու դրամ հաւաքէ:

Այս դանձանակը առ այժմ սա բանը ըրեր է որ՝ բարեկամական այցելութիւնք զգալի կեցողով նուազեր են, Այս որոշումը մասնաւորապէս կանանց դատուն իրարանցումին պատճառ եղեր է՝ նմոյշ մը.

— Կիւլիւկ հանրմ, անցած օր Տիօն աղայենց գացի, անանկ պզտիկ մը մընացի քի՛չեմ կրնար ըսել:

— Ինչ եղաւ քի՛.

— Ինծի պէս տիկին Աշուսեակ ալ հոն այցելութեան եկած էր, սուրճը առնելէն ետքը՝ նայիս որ դանձանակ մը բերին. «հիւանդանոցին համար է» ըրելով՝ փարայ ուզեցին. տիկին Արուսեակ հանեց 40 փարանոց մը ձգեց. ես ալ՝ բռնութեան վրաս չգտնուելուն պատճառաւ չի կրցայ բան մը ձգել, բայց

անանկ պղտիկ մնացի որ չեմ կրնար պատմել .

— Ո՛ւյ , ողջ ըլլաւ Մանիկ հանրմ , աղէկ որ ըսիր . այսօր տիկին Զապելենց այցելութիւն մը կ'ուզէի տալ . բայց որովհետեւ վրաս մանրուք չունիմ , տեղս կը նստիմ :

— Ատանկ պիտի ընես .

— Զըսե՞ս , ասկէ ետքը ժամ երթալու պէս բօսթմէնը հետ առնելու է :

— Այո՛ , ուրիշ ճար չի կայ .

— Գէորգ աղա , աս գիշեր հացէն ետքը Տիրատուր աղայենց երկննա՞նք :

— Աս գիշեր տեղերնիդ նստեցէ՛ք .

— Եւփիմէն գլուխը սանտրեց , հաղըր եղաւ տէ . . .

— Էյ ի՛նչ ընեմ , ես հաղըրութիւն չունիմ :

— Գուն ի՛նչ հաղըրութիւն պիտի ունենաս . քօլալը շապիկդ թէմիդ է , աւտուն փոխեցիր :

— Հաղըրութիւն կըսեմ նէ՛ փարա չունիմ ըսել է . աս իրիկուան եղածը չեղածը խասապին ու պախալին տուի :


— Վիզիթայի երթալու համար փարան ի՛նչ պիտի ընենք :

— Ի նպաստ Հիւանդանոցի է ըսելով գանձանակ մը պիտի բերեն՝ ամենէս ալ զատ զատ փարա պիտի ուզեն . հիմա հասկցա՞ր չերթանք ըսելուս պատճառը :

— Էյ ատանկ գտնձանակ մը մեզի չի բերին նէ . . .

— Էլի գուլաղընտա տըր , ասօր չի բերեն նէ վաղը պիտի բերեն :

— Աս ի՛նչ օրերու հասանք , հոգի , բարեկամի մը տունը երթալով երկու խօսք ընելուն վրայ պիլէ վերկի կը Գընեն կոր :



Վարդապետ մը օր մը քարոզին մէջ սխալելով՝ « Յիսուս 5000 հացով 5 մարդ կշտացուց » , ըսաւ : Գիւղապետը , որ ժողովրդին մէջ կը գտնուէր , ատենաբանը ծաղրելով ըսաւ . — Հինգ հազար հացով հինգ մարդ ես ալ կրնամ կշտացընել :

Վարդապետը քա՛նի մը օրէն ետքը ուզելով քարոզին նոյն սխալը շտկել , գոչեց . — Յիսուս հինգ հացով հինգ հազար մարդ կշտացուց . . . յետոյ գիւղապետին դառնալով , գոռոզութեամբ հարցուց . — Պարոն գիւղապետ , աս ալ կըրնամ ընել .

— Այո , պատասխանեց գիւղապետը , առջի քարոզիդ մնացորդներովը :

—

Վարժարանի մը տարեկան հարցաքննութեանը ատեն վարդապետին մէկը տեսնելով որ պղտիկ տղայ մը շատ յաջող պատասխաններ կուտայ Սրբազան պատմութեան դասին մէջ , զայն շուտօրէնցնելու մտօք կը հարցնէ .

— Տղա՛ս , կրնաս ինծի ըսել թէ նոյն նահապետի տապանէն որո՞նք դուրսը մնացէ՛ն .

— Կայտառ ուստնողը անմիջապէս կը պատասխանէ . — Վարդապետներն ու մայրապետները , որոնք արու և էգ չըլլալուն համար ներս չընդունուեցան :



ՄՐՁՈՒՆՆԵՐԸ ԶԵՋԵԼՈՒ ՊԱՐՁ ՄԻՋՈՅՆԵՐ

Ա . Գաւաթ մը լեցուն ջուրի մէջ գիր մատնոցի մը չափ մեղր , մըջունք մեղրին հոտէն հրապուրուելով , կուգան կը ժողովուն գաւաթին մէջ եւ կը խեղդուին : Երբ տան մէջ ու է տեղ մը մըրջունք երեւան ելլեն՝ առջի իրիկուընէ

մեղրով գաւաթը այն տեղ գիր, առաւտուն սեղաժ պիտի գտնես զայն մըրջուններով, եւ մի քանի օրուան կրկնութեամբ անոնց հետքը անգամ չի մնար:

Բ. Եթէ սղոցացեալ վայտի փոշի ցանէք մըջուններուն դուրս ելած ծերպերուն մէջ, նոյնպէս եթէ պարտէզներու մէջ մըջուններու յառաջացած ճամբուն վրայ վայտի փոշիով խառն ջուր սրսկէք՝ քիչ ատենէն կը հեռանան ամենքն ալ:

Գ. Ինչպէս յայտնի է, մըջունք պտղատու ծառերուն վրայ ալ կ'ելլեն. ասոնց ընթացքը արգիլելու համար՝ ծառերու արմատին բոլորտիքը կաւիճի փոշիով շրջանակ մը ձևացնելու է. մըջունը բնազդամբ կ'ատէ կաւիճը, եթէ իր ճամբուն վրայ կաւիճ ցանուի՝ ետ կը դառնայ, եթէ բոլորտիքը ցանուի՝ բանտարկեալ կը մնայ:

Դ. Զուիցերիոյ մէջ տաթիսի տերեւեր կը դնեն մըջուններուն գտնուած տեղերը. հոտէն չախորժելով կը փախչին եղեր:

Ե. Եթէ ընկուզենի տերեւներով եռացեալ ջուրը մըջուններու բոյնին մէջ թափուի, մէկ մըջուն անգամ ողջ չի մնար:

Կամ եթէ անոնց բոյնին մէջ քիչ մը աղ ցանուի եւ վրան մէկ երկու կաթիլ ջուր թափուի՝ ամենքն ալ կը ոչնչանան:

ԱՁԴ



ՏԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՓԷՆԿԱՆԵՆ Ե ԸՆԿ.

Հաճի Բանաքօին ճիշդ գէմը

Արհեստին մէջ կատարելութեան հա-

սած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կը լայն որ հայ ու օտար փափկակերներ իրենց գարնանային ու ամառնային ժամադրաւոր մը ընեն զայն զբօսնելու ու ճաշելու:

Հարսանեաց և խնձրներու սպաններ ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գիներով վարձու կը տրուին:

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը կազմեալ կը վաճառին գին տասը ֆր. Ա. Զարպհան՝ լեանի գրատունը:

Տ Գ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:

Այցետոմս, հաջէտոմս, նոմոսկա զուլս, հրաւիրատոմս, բարենիշ. տոմսակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խըմբագրութեան:

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴՍՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈՔՐԻՆ ՏՂԱՅՈՑ

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.